«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 6; 21.02.2025թ.

1. 2024-2025թթ. ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի, այդ թվում՝ աշխատանքային կիսամյակի, արդյունքների, ի հայտ եկած խնդիրների և լուծման հնարավոր ուղիների վերաբերյալ

1.1. Ընդունել ի գիտություն և, եթե քննարկված խնդիրների լուծման ուղղությամբ կլինեն համակողմանի հիմնավորված առաջարկություններ, ներկայացնել ռեկտորատի հաջորդ նիստին:

1.2. Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի 2024-2025 ուստարվա առաջին կիսամյակում առարկայական մեկ պարտք ունեցող թվով 18 ուսանողներին տալ պարտքը հանձնելու ևս մեկ հնարավորություն մինչև ս.թ. փետրվարի 28-ը, իսկ 2 և ավելի առարկայական պարտքեր ունեցող ուսանողներին հեռացնել քոլեջից:

1.3. Քննությունները կազմակերպել առնվազն երեք անձից բաղկացած հանձնաժողովներով (դասավանդող դասախոս, ամբիոնի վարիչ, ՈՒԳԿՎ ներկայացուցիչ):

2. ՀԱԱՀ ՈՒՓՏ-ների, ուսումնական և գիտական ստորաբաժանումների միջև համագործակցության ակտիվացման հնարավորությունների վերաբերյալ

Ընդունել ի գիտություն և ուսումնական ստորաբաժանումներում սկսել գործող ուսումնական պլանները բարելավելու աշխատանքները:

3. 2024-2025թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական պարապմունքների կազմակերպման ընթացքի, խնդիրների և բարելավման ուղիների վերաբերյալ

3.1. Ընդունել ի գիտություն:

3.2. Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջում ուսման վարձավճարի զեղչ սահմանել 16 և ավելի միջին բալ ունեցող ուսանողների համար:

3.3. Հանձնարարել ուսումնական գործընթացի կառավարման վարչության պետ Ա. Աղասարյանին, իրավաբանական բաժնի պետ Մ. Վարդանյանին, գլխավոր հաշվապահ Մ. Պողոսյանին սեղմ ժամկետում ուսումնասիրել ներբուհական զեղչ սահմանելու համար համալսարանի կանոնակարգերը, գործատուների հետ կնքվող պայմանագրի ձևաչափը, ներբուհական զեղչեր սահմանելու սահմանափակումները և ներկայացնել առաջարկություն:

3.4. Բույսերի պաշտպանություն կրթական ծրագրի առկա ուսուցման երկրորդ կուրսի ուսանող Սմբատ Արթուրի Մելքոնյանի 2024-2025 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսման վարձը՝ 240 հազար ՀՀ դրամը, փոխհատուցել համալսարանի միջոցների հաշվին:

4. ՀԱԱՀ ռեկտորատի 2025թ հունվարի 17-ի նիստի որոշման վերաբերյալ

Ընդունել ի գիտություն:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ.Ս. ՋԱՔՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ